Հայաստան

Հունվարի 1 - մարտի 31, 2021 թվական

ՄԱԿ ՓԳՀ-ն ՄԱԿ-ի մշտական համակարգողի գրասենյակի և ՀՀ կառավարության հետ միասին **շարունակում է համակարգել** Լեռնային Ղարաբաղի (ԼՂ) փախստականի իրավիճակում գտնվող բնակչության և հյուրընկալող համայնքների կարիքներին արձագանքման աշխատանքները:

Այդ կարիքների հասցեագրման նպատակով հունվարի 22-ից սկսել է գործել **Միջգործակալական արձագանքման ծրագիրը:** **Ճապոնիայի** կառավարությունը ՄԱԿ-ի Հայաստանի գրասենյակին տրամադրեց 3.6 մլն ԱՄՆ դոլարի չափով արտակարգ իրավիճակների արձագանքման դրամաշնորհ, որից **2 միլիոնը հատկացվեց ՄԱԿ ՓԳՀ-ին:**

ՄԱԿ ՓԳՀ-ն շարունակում է բարելավել **ապաստանի ընթացակարգը և փախստականների ընդունման պայմանները:** Միգրացիոն ծառայությունը և ՄԱԿ ՓԳՀ-ն հրապարակել են լավ գործելակերպեր՝ ապաստանի ընթացակարգը **COVID-19** հետ կապված իրավիճակին համապատասխանեցնելու նպատակով:

ՄՏԱՀՈԳՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ ԳՏՆՎՈՂ ԱՆՁԻՆՔ*



* Աղբյուրը. Միգրացիոն ծառայություն, հունվարի 1, 2021
** Ներառյալ՝ 66,051 փախստականի իրավիճակում գտնվող անձինք՝ ԼՂ հակամարտության հետևանքով [2021 թ. մարտի դրությամբ] և Հայաստանում բնակվող 4,527 փախստականի իրավիճակում գտնվող սիրիահայ, որոնց աջակցում է ՄԱԿ ՓԳՀ-ն:

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ (2021 Թ. ՄԱՐՏԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ)

Ֆինանսական պահանջներ

15.3 միլիոն ԱՄՆ դոլար*



Ֆինանսավորված՝ 24%

3.7 միլիոն ԱՄՆ

Պակասող ֆինանսավորում՝

11.6 միլիոն ԱՄՆ դոլար

* Ներառյալ՝ 12.1 միլիոն ԱՄՆ դոլար՝ Միջգործակալական արձագանքման ծրագրին:

Գործառնական համատեքստ

2020 թ. սեպտեմբերի 27-ին շփման գծի երկայնքով ծայր առած բախումներն ընդլայնվեցին **Լեռնային Ղարաբաղում** և հարակից տարածքներում, մինչև նոյեմբերի 9-ին հրադադարի հայտարարություն ստորագրվեց: Հակամարտության հետևանքով զոհվեցին խաղաղ բնակիչներ, ավերվեցին ենթակառուցվածքներ և Լեռնային Ղարաբաղի ու Հայաստանի հարակից շրջաններից շուրջ 90,000 մարդ տեղահանվեց: Ըստ Միգրացիոն ծառայության, 2021 թ. մարտի 30-ի դրությամբ Հայաստանում **66,051 մարդ** գտնվում է փախստականի իրավիճակում: Նրանց գերակշիռ մասը կանայք և երեխաներ են, որոնք հյուրընկալվում են իրենց հարազատների մոտ կամ ժամանակավոր կացարաններում, ոմանք էլ ապրում են ոչ բարվոք պայմաններում:

Փաստաթղթերը, բնակարանային ապահովումը, պատշաճ զբաղվածությունը և կենսապահովման հնարավորությունները շարունակում են մնալ ապաստան հայցողների և փախստականների առավել հրատապ կարիքների շարքում: Հակամարտության սրացմանը զուգահեռ ընթացող COVID-19 համավարակն Է՛լ ավելի խորացրեց Հայաստանի դժվարին սոցիալ-տնտեսական իրավիճակով պայմանավորված մարտահրավերները:

ՄԱԿ ՓԳՀ-ն և իր գործընկերներն աշխատում են պաշտպանության միջավայրի կատարելագործման ուղղությամբ, միևնույն ժամանակ աջակցություն տրամադրելով առավել ռիսկային խմբերի հետ: ՄԱԿ ՓԳՀ-ն հանդես է գալիս ի շահ մտահոգության ներքո գտնվող անձանց ազգային արձագանքման, ներառյալ՝ COVID-19 վերականգնման և պատվաստման ծրագրերում, ինչպես նաև այլ օրենսդրական և վարչական բարեփոխումներում ներառմանը:

Լեռնային Ղարաբաղի փախստականի իրավիճակում գտնվող անձանց հրատապ կարիքների հասցեագրում

ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի մշտական համակարգողի և ՄԱԿ ՓԳՀ-ի համատեղ ղեկավարությամբ մշակվել է Միջգործակալական արձագանքման 2020-2021 թթ. ծրագիրը, որի նպատակն է աջակցել մարդասիրական արձագանքմանը: Ծրագիրը վերաբերում է Հայաստանին և ներառում է 2020 թ. հոկտեմբերից մինչև 2021 թ. հունիսն ընկած ինանմսյա ժամանակահատվածը:

Այն ներկայացնում է ՄԱԿ-ի, ՀԿ-ների և Կարմիր խաչի շարժման անդամ 35 գործընկերների ծրագրված միջոցառումներ, որոնց համար 62.1 միլիոն ԱՄՆ դոլար է հարկավոր: Ծրագիրը փոխկապակցված է ՄԱԿ-ի առավել ընդհանուր ծրագրերին, ինչպիսիք են ՄԱԿ COVID-19-ին սոցիալ-տնտեսական արձագանքման ծրագիրը և ՄԱԿ Կայուն զարգացման շրջանակը (մշակման փուլում է):

ՄԱԿ ՓԳՀ-ն ընդլայնեց իր **Պաշտպանության մշտադիտարկումը,** որը պաշտպանության հետ կապված միտումների, ռիսկերի և խոցելիությունների, ինչպես նաև միջամտության և օժանդակության հնարավորությունների վերաբերյալ հավաստի տեղեկություններ է տրամադրում: Այն կարևոր դեր է կատարում խոցելի անձանց հայտնաբերման և առավել հրատապ կարիքների սահմանման հարցերում:

Կացարանը, կանխիկ գումարը, կենցաղային իրերը, զբաղվածությունը, հագուստը, սննդամթերքը, առողջապահական և հիգիենայի պարագաներն՝ ըստ առաջնահերթության, շարունակում են մնալ փախստականի իրավիճակում գտնվող անձանց հիմնախնդիրների շարքում: Սակայն ներկայում շատ ընտանիքների համար զբաղվածությունն ու հագուստը սննդամթերքից ավելի կարևոր են:

ՄԱԿ ՓԳՀ առաջնահերթություններ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

- Շարունակել **պաշտպանության մշտադիտարկում** իրականացնել՝ պաշտպանության ռիսկերի նախանշման և ՄԱԿ ՓԳՀ մտահոգության ներքո գտնվող անձանց կենսապայմանների մշտադիտարկման նպատակով:
- Բարձրացնել իրազեկվածության մակարդակը և, անհրաժեշտության դեպքում, **իրավական աջակցություն տրամադրել:**
- Նպաստել **գենդերով պայմանավորված բռնության կանխարգելմանը և դրանից պաշտպանությանը:**
- Խթանել **իրավունքների և ծառայությունների հասանելիության** վերաբերյալ հաղորդակցությունը համայնքների հետ:

ԿԱՑԱՐԱՆ ԵՎ ՈՊԱ-ՆԵՐ

- Օժանդակել **կացարանի ապահովման գործընթացին** (այդ թվում՝ հավաքակայանների վերանորոգման միջոցով)՝ հատկապես ձմեռնամուտի համատեքստում, միևնույն ժամանակ հանդես գալով երկարաժամկետ լուծումների օգտին:
- Փախստականի իրավիճակում գտնվող առավել խոցելի անձանց տրամադրել և բաշխել **ոչ պարենային ապրանքների (ՈՊԱ) լրակազմեր,** ներառյալ՝ անձնական հիգիենայի, կենցաղային, խոհանոցային, ձմռանը նախապատրաստվելու պարագաների հավաքածուներ և **կանխիկ դրամական օգնություն:**

2021 թ. հունվար-մարտ ամիսների ձեռքբերումները

NFI

Փախստականների նման իրավիճակում գտնվող մոտ **4,950 մարդ** ստացել է **հիգիենայի պարագաների հավաքածու, 22,800 մարդ՝ բնաիրային օգնություն առաջնային կարիքների համար** և **շուրջ 43,000-ը** ՄԱԿ ՓԳՀ գործընկեր՝ Հայկական կարմիր խաչի ընկերության օժանդակությամբ՝ **ձմեռային հագուստ:** Ի հավելումն, **1,127 տնային տնտեսության** ՄԱԿ ՓԳՀ գործընկեր՝ «Առաքելություն Հայաստանը» ոչ դրամական աջակցություն է տրամադրել:

ՄԱԿ ՓԳՀ-ն փախստականների **պաշտպանության մշտադիտարկման 645 հարցազրույց** է ունեցել 2,872 անձի հետ, որոնցից 256-ը դաշտային այցերի և ՈՊԱ-ների բաշխման ժամանակ են տեղի ունեցել, իսկ 389-ը՝ հեռախոսով: Առանձնացվել է 336 տնային տնտեսություն (1,484 անձ)՝ հավելյալ աջակցության և ծառայությունների հասանելիության նպատակով ուղղորդման համար:

Մոտավորապես **4,000 անձ** օգտվել է «Առաքելություն Հայաստանի» տրամադրած սոցիալական ծառայություններից: Դրամական օգնություն է ստացել շուրջ **1,000** անձ:

Մտահոգության ներքո գտնվող **723** անձ օգտվել է առողջապահական ծառայություններից:

ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակի կողմից պաշտպանության մշտադիտարկման այցերի և հարցազրույցների ժամանակ իրականացված իրազեկման միջոցառումների շնորհիվ մոտ **3,500** մարդ է տեղեկացվել:

78 մարդ «Առաքելություն Հայաստանի» կողմից իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն է ստացել:

Գործընկերային աշխատանք

- ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակը ՄԱԿ-ի հայաստանյան թիմի հետ միասին համագործակցում է պետական և ոչ պետական շահակից մարմինների հետ: ՄԱԿ ՓԳՀ-ն անդամակցում է մի շարք միջգերատեսչական համակարգման հարթակների և մեխանիզմների: ՄԱԿ-ի հայաստանյան թիմի հետ միասին այն խթանում է Հայաստանում Կայուն զարգացման Օրակարգ 2030-ի կենսագործման աշխատանքները:
- ՄԱԿ-ի հայաստանյան թիմը ՄԱԿ-ի մշտական համակարգողի և ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակի համատեղ ղեկավարության ներքո գտնվող համակարգման ճկուն կառույց է ստեղծել: Տեխնիկական մակարդակում համակարգող կառույցը խարսխված է մարդասիրական չորս Աշխատանքային խմբերի (ԱԽ), ինչպես նաև Վաղ վերականգնման թեմատիկ հինգերորդ ԱԽ-ի վրա, որոնք նպատակ ունեն ամրապնդել ինչպես փախստականի իրավիճակում գտնվող բնակչության, այնպես էլ հյուրընկալող համայնքների դիմակայության կարողությունները: ՄԱԿ ՓԳՀ-ն ղեկավարում է Պաշտպանության ԱԽ-ն և Կացարանի ու Ոչ պարենային ապրանքների (ՈՊԱ) ԱԽ-ն, ինչպես նաև Դրամական օգնության ենթաաշխատախմբի համաղեկավար է:

Ֆինանսական տեղեկություններ

2021 թվականին ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակը փորձում է **15.3 միլիոն** ԱՄՆ դոլար հայթայթել՝ փախստականի իրավիճակում գտնվող անձանց կարիքների բավարարման և իր տարեկան ծրագրի ծախսերը հոգալու նպատակով: **Միջգործակալական արձագանքման ծրագրի** ֆինանսական պահանջները հասնում են **62.1 միլիոն ԱՄՆ դոլարի**:

ՄԱԿ ՓԳՀ-ն երախտապարտ է այն նվիրատու կառույցներին, որոնք ներդրում ունեցան 2021 թ. իր ծրագրերի իրականացման գործում
Հայաստան | CERF | Ճապոնիա | Ռուսաստան| Միացյալ Նահանգներ

ՄԱԿ ՓԳՀ-ն շնորհակալություն է հայտնում դոնոր կառույցներին՝ 2021 գլոբալ ծրագրերին առանց նախապայմանների կատարված ներդրումների համար

Նորվեգիա | Շվեդիա | Նիդեռլանդներ | Դանիա | Գերմանիա | Շվեյցարիա | Իռլանդիա | Բելգիա | Ալժիր | Հայաստան | Կանադա | Էստոնիա | Ֆինլանդիա | Իսլանդիա | Լյուքսեմբուրգ | Մալթա | Մոնակո | Մոնտենեգրո | Նոր Զելանդիա | Պորտուգալիա | Կորեայի Հանրապետություն | Սաուդյան Արաբիա | Սինգապուր | Թաիլանդ | Թուրքիա | Ուրուգվայ | մասնավոր նվիրատուներ

Մանրամասն տեղեկությունների համար այցելել UNHCR Operational Data Portal
ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակ, արտաքին կապերի համակարգող՝ Ռասել Ֆրեյզեր,
fraser@unhcr.org

Coordination Steering Group Armenia

Հայաստան. Փախստականի իրավիճակում գտնվող անձինք, որոնք տեղահանվել են Լեռնային Ղարաբաղից

Information Management Working Group (IMWG) product supported by UNRCO and UNHCR



Printing date: 23 Mar 2021 **Sources:** UNHCR, UNCS, REACH, MoLSA, UNICEF, UNFPA, UNDP, IOM, MoTAI (MS) **Author:** UNHCR - Armenia
Feedback: illangas@unhcr.org **Filename:** CSG_PIARLS_A4P_20210323